ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Բ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

Լուսինե Սարգսյան
Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս

ԱՎԱԳ ԾԱՂԿՈՂԻ 1329 Թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1329 թ. Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 7650) մշտապես իր վրա է հրավիրել հայ և օտարազգի արվեստաբանների ուշադրությունը: Մատյանի նկարազարդումներն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ռուս հայտնի գիտնական Ա. Ն. Սվիրինը, ով ուսումնասիրել է հայ միջնադարյան արվեստը, մասնավորապես մանրանկարչությունը: 1939 թ. լույս տեսած «Հին Հայաստանի մանրանկարչությունը» գրքում նա անդրադարձել է նաև Ավագ Ծաղկողին: Սվիրինը առաջինն էր, ով առաջ քաշեց այն տեսակետը, որ 1329 թ., 1337 թ. և 1358 թ. ձեռագրերը միևնույն նկարչի ձեռքի գործերն են[1]: Հաշվի առնելով այն փաստը, որ Ավագ Ծաղկողը 1329 թ. Ավետարանը նկարազարդել է Օրդու-բազարում հեղինակը նրան դասել է Ղրիմի մանրանկարիչների շարքին: Սվիրինն այստեղ վրիպել է, քանի որ Օրդու-բազարը ոչ թե Ղրիմում է գտնվել, այլ Սուլթանիեի քաղաքամասերից մեկն է եղել և Ավագը չէր կարող Ղրիմի դպրոցի ներկայացուցիչ համարվել: Նրա բոլոր ստեղծագործություններում (այդ թվում 1329 թ. Ավետարանում) Սվիրինը կարևորում է շարժումը, ծավալային մշակումը:

Հայ մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Հովսեփյանը 1948 թ. Անթիլիասում տպագրված «Հասկ» հայագիտական տարեգրքում, քննության առնելով գրիչ և մանրանկարիչ Մխիթար Անեցու ստեղծագործությունները, անդրադառնում է նաև նկարիչ Ավագին: Հեղինակը որոշ տեղեկություններ է տալիս Ավագի կյանքից՝ որպես աղբյուր օգտագործելով հիշատակարանները: Քաղելով դրանցում եղած տեղեկությունները՝ Հովսեփյանը հանգում է այն եզրակացության, որ մեզ հետաքրքրող ձեռագիրը գրվել և ծաղկվել է 1329 թ.[2]: Գիտնականը համեմատություններ է կատարում 1329 թ. Ավետարանի և 1334 թ. Ավետարանի (Երուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի հավաքածու, ձեռ. 1941) մանրանկարների միջև: Նա անդրադառնում է երկու ձեռագրերում պատկերված «Հաղորդության», «Խաչելության», «Դժոխքի ավերման», «Համբարձման», «Հոգեգալստի» տեսարաններին: Իր հետևություններում նկատում է, որ մանրանկարների պատկերագրությունը գրեթե նույնն է, փոփոխություններն

[1] Տե՛ս Свирин А., Миниатюра Древней Армении, М., 1939, стр. 96:
[2] Տե՛ս Հովսեփյան Գ., Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 201:

աննշան են[1]: Ելնելով ձեռագրի հիշատակարանի տեղեկություններից (էջ 349բ)՝ Հովսեփյանը հայտնում է այն կարծիքը, որ 1329 թ. ձեռագիրը ծաղկելիս Ավագի համար իբրև օրինակ է ծառայել Թորոս Տարոնացու 1323 թ. Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 6289): Միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ առիթ չի ունեցել ցանկերը համեմատելու[2]:

Հաշվի առնելով այն փաստը, որ թե՛ Ավագը, թե՛ Թորոսը միևնույն դպրոցի սաներ են, երկուսն էլ աշակերտել են Եսայի Նչեցուն, կարելի է ենթադրել, որ 1323 թ. Ավետարանը կարող էր Ավագի համար հադիսանալ իբրև գաղափար, օրինակ 1329 թ. Ավետարանը ծաղկելիս:

Գարեգին Հովսեփյանն արձանագրում է մեկ այլ կարևոր փաստ ևս. Կաֆայի բազմաշխատ նկարիչ Նիկողայոսը 1329 թ. ձեռագրից արտանկարել է տերունական պատկերները իր 1654 թ. և 1691 թ. ձեռագրերում[3]: Ըստ հեղինակի մեզ հետաքրքրող Ավետարանը ընդօրինակման աղբյուր է հանդիսացել նաև Մխիթար Անեցու 1356-1357 թթ. ծաղկված ձեռագրի համար[4]:

Ավելի ուշ՝ 1969 թ., հետմահու տպագրված «Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ» գրքում Գ. Հովսեփյանը քննության է առնում Ավագի ծաղկած հինգ ձեռագրեր, այդ թվում՝ 1329 թ. Ավետարանը: Գիտնականը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ձեռագիրը ստացող Ասլանի և նկարչի պատկերների վրա: Հովսեփյանն Ավագի արվեստը բնութագրում է հետևյալ կերպ. «Փափուկ և նուրբ դեմքերը, լավ մշակված դաշտանկարները մեղմ և ակնահաճո են»: Ըստ նրա Ավագի արվեստն ունի կիլիկյան և ոչ թե արևելյան աղերսներ[5]:

1329 թ. Ավետարանը դառնում է նաև ականավոր բյուզանդագետ, հայագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանի քննության առարկան: 1958 թ. Չեսքր Բիթթի գրադարանի ձեռագրացուցակում հեղինակը Ավագի ստեղծագործությունները դիտարկում է տարբեր դպրոցների մանրանկարիչների ազդեցության ոլորտներում: Տեր-Ներսեսյանը որոշ պատկերագրական և ոճական նմանություններ է տեսնում Ավագի և Թորոս Տարոնացու աշխատանքներում:

Թեպետ Ավագը երկար տարիներ աշխատել է Սուլթանիեում և այստեղ ծաղկել 1329 թ. և 1337 թ. ձեռագրերը, այնուամենայնիվ նա զերծ է մնացել տեղի մանրանկարչության ազդեցությունից, ինչը չի կարելի

[1] Տե՛ս Նույն տեղում, էջ 201-204:
[2] Տե՛ս Նույն տեղում, էջ 199:
[3] Տե՛ս Հովսեփյան Գ., «Հասկ» ..., էջ 204:
[4] Նույն տեղում, էջ 211:
[5] Տե՛ս Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս, 1969, էջ 278:

ասել նրա հետ համագործակցած Մխիթար Անեցու մասին[1]:

Ս. Տեր-Ներսեսյանի հավաստմամբ՝ «մասնավորապես Թորոս Երեցը և Ավագը նոր լույս են սփռում Սյունիքի նահանգի և Հայաստանի սահմաններից դուրս հարևան շրջանների արվեստի վրա»[2]:

1977 թ. Փարիզում տպագրված «Հայ արվեստը» աշխատության մեջ մեծավաստակ գիտնականը Ավագի արվեստը կապում է նաև կիլիկյան մանրանկարչության, մասնավորապես Թորոս Ռոսլինի աշխատանքների հետ, սակայն նշում, որ Ավագի արվեստը կիլիկյան մանրանկարչության կույր ընդօրինակությունը չէ. նա կարողացել է հմտորեն միաձուլել Բարձր Հայքի և Կիլիկիայի մանրանկարչական ավանդույթները[3]:

Հայ արվեստի ուսումնասիրող Է. Կորխմազյանը, 1976 թ. հրատարակված «Մատենադարանի գեղարվեստական գանձերը» գրքում Ռ. Դրամփյանի հետ հանդես գալով իբրև համահեղինակ, որոշ լուսաբանումներ է տալիս Ավագի արվեստի շուրջ: Ըստ Կորխմազյանի մանրանկարներում առկա խստաշունչ հանդիսավորությունը և հարուստ զարդանկարչությունը նկարչին կապում են կիլիկյան մանրանկարչության հետ: Սակայն ի տարբերություն կիլիկյան ստեղծագործությունների Ավագի հորինվածքային կառուցումը այնքան էլ ազատ չէ, ինչի պատճառով նկարները մի փոքր ծանրաշարժ են թվում[4]:

1978 թ. լույս տեսած «Ղրիմի հայկական մանրանկարչությունը XIV-XVII դդ.» աշխատության մեջ Կորխմազյանը ժխտում է Սվիրինի այն տեսակետը, որ Օրդու-բազարը գտնվելիս է եղել Ղրիմում[5]:

1987 թ. հրատարակված «Հայկական մանրանկարչություն» աշխատության մեջ Կորխմազյանը Ավագ Ծաղկողի արվեստը բնորոշում է որպես էկլեկտիկ բնույթ ունեցող, ուր միահյուսված են կիլիկյան և բուն հայկական ավանդույթները, գնահատում է նկարչի կատարողական բարձր մակարդակը, մանրանկարների նրբագեղությունը և հարուստ ներկապնակը՝ ոսկու չափավոր գործածությամբ[6]:

2009 թ. Երևանում տպված «Ղրիմի հայկական մանրանկարչությունը և ճարտարապետությունը» (գերմաներեն) գրքում հանդիպում

[1] Տե՛ս Der-Nersessian S., The Chester Beatty library. A catalogue of the Armenian manuscripts, Dublin, 1958, p. XXXII, XXXIII:

[2] Նույն տեղում, էջ XXX:

[3] Տե՛ս Der-Nersessian S., L' Art Armenien, Paris, 1977, p. 224:

[4] Տե՛ս Корхмазян Э., Дрампян Р., Художественные сокровища Матенадарана, М., 1976, стр. 104-105:

[5] Տե՛ս Корхмазян Э., Армянская миниатюра Крыма XIV-XVII вв., Ер., 1978, стр. 19:

[6] Տե՛ս Կորխմազյան Է., Հակոբյան Հ., Հայկական մանրանկարչություն, Եր., 1987, էջ 30:

ենք 1329 թ. ձեռագրի մանրանկարների անգույն վերատպությունների, որոնցում ներկայացվում են տերունական պատկերներ, չորս ավետարանիչների դիմանկարներ և չորս անվանաթերթեր[1]:

Հայ միջնադարյան արվեստն ուսումնասիրող Ա. Գևորգյանը «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում հանդես գալով Գլաձորի մանրանկարչության վերաբերյալ հոդվածով՝ Ավագ Ծաղկողին բնորոշում է իբրև անվանի մանրանկարիչ, ով Գլաձորի մանրանկարչական սկզբունքներին տիրապետելուց բացի կրել է նաև կիլիկյան վարպետների ազդեցությունը՝ կիլիկյան ձեռագրերն օգտագործելով իբրև ընդօրինակման օրինակներ[2]: 1329 թ. Ավետարանին Ա. Գևորգյանն անդրադառնում է «Հայ նկարիչների մատենագիտություն IX-XIX դդ.» մեծահատոր աշխատության մեջ, ուր տալիս է ձեռագրի նկարագրությունը, բերում հատվածներ հիշատակարանից, կարևորում ձեռագրի մարդագիր, թռչնագիր, կենդանագիր, հանգուցագիր զարդագրերը, լուսանցազարդերում առկա տարբեր պատկերները՝ թռչուն, հովիվ, տաճար, հուշկապարիկ և բուսական բազմաթիվ մոտիվներ:

Ավագ Ծաղկողի արվեստը քննության է առել նաև արվեստաբան Ա. Ավետիսյանը: 1961 թ. «Էջմիածին» հանդեսում տպագրվում է նրա հոդվածը Ավագի մասին: Այստեղ քննության առնելով 1329 թ. Ավետարանը՝ հեղինակը նկատում է հին հայկական ավանդույթի պահպանում, ըստ որի խորաններին հաջորդում են ամբողջադիր ավետարանական պատկերները (թվով 12 և ավելի), որպես կանոն, նկարված են նաև պատվիրատուները[3]: 1971 թ. լույս է տեսնում Ավետիսյանի «Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը» աշխատությունը, որտեղ հեղինակը գլաձորյան մանրանկարիչներ Մոմիկի, Թորոս Տարոնացու և այլոց կողքին լուսաբանում է նաև Ավագի արվեստի առանձնահատկությունները: 1329 թ. Ավետարանի պատկերազարդումները համեմատում է Մոմիկի «Ստեփանոս Օրբելյանի Ավետարանի» հետ. սյուժետային բոլոր մանրանկարները ըստ վաղեմի սովորության երկու ձեռագրերում էլ զետեղված են սկզբում[4]:

Ա. Ավետիսյանի ուսումնասիրությունները նոր քայլ են Ավագ նկարչի գրեթե չլուսաբանված արվեստի ուսումնասիրության գործում և հնարավորություն են տալիս ավելի մերձենալու նրա արվեստին:

[1] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., Armenische Buchmalerei und Baukunst der Krim, Եր., 2009, Abb. 1335-1358:

[2] Տե՛ս Գևորգյան Ա., Գլաձորի մանրանկարչական արվեստը, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Եր. 1984, հոկտ. 17, էջ 5:

[3] Տե՛ս Ավետիսյան Ա., Մանրանկարիչ Ավագ, «Էջմիածին» հանդես, Եր., 1961, է, էջ 52:

[4] Տե՛ս Ավետիսյան Ա., Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Եր., 1971, էջ 144:

1329 թ. Ավետարանի նկարազարդմանն է վերաբերում արվեստաբան Լ. Զաքարյանի հոդվածը: 1985 թ. հրատարակված աշխատանքում նա քննության է առնում Ավետարանի «Վերջին դատաստանը» ներկայացնող մանրանկարը: Ըստ էության այն հիշեցնում է կիլիկյան վարպետների և հատկապես Թորոս Ռոսլինի կողմից մանրամասն մշակված օրինակը, որի մեջ Ավագը որոշ փոփոխություններ է կատարել: Ռոսլինի «Վերջին դատաստանը» ամբողջական է (Բալթիմոր, Ուոլթերս արվեստի պատկերասրահ, ձեռ. 539), մինչդեռ Ավագը տրոհում է այն երկու հանդիպադիր էջերի (26բ և 27ա)՝ առավելագույնս ընդգծելով Քրիստոսի երկնային թագավոր լինելու հանգամանքը[1]:

Ավագը յուրովի է մեկնաբանում դիմանկարի ավանդույթը հայ արվեստում: Մատյանի «Վերջին դատաստանը» ներկայացնող վերը նշված մանրանկարի (էջ 25ա) ներքին լուսանցքի մոտ պատկերված է Ասլանը՝ գրկած մանկանը Քրիստոսին մատուցելու պահին: Դատելով հիշատակարանից՝ դա նրա մանկամարդ վաղամեռիկ որդին է: Արվեստաբանի բնորոշմամբ՝ «նման կենդանի, իրապաշտական շնչով տոգորված, նույնիսկ փոքր-ինչ կենցաղային բնույթի դիմանկարներ չեն հանդիպում ո՛չ բյուզանդական, ո՛չ կիլիկյան արվեստների մեջ, և ինչ որ տեղ մնում են յուրահատուկ Ավագի արվեստին»[2]:

Լ. Զաքարյանի այս ուսումնասիրությունը արժեքավոր է, քանզի վեր է հանում Ավագ նկարչի ինքնատիպ արվեստի մի շարք գծեր, կատարում պատկերագրական և ոճական վերլուծություններ՝ թափանցելով Ավագի պատկերների գաղտնարանները:

Վերը բերված ուսումնասիրություններից բացի կան նաև այլ աշխատություններ, որոնցում 1329 թ. Ավետարանին անդրադառնում են հպանցիկ կերպով:

Մեր այս քննությունը ցույց է տալիս, որ Ավագ Ծաղկողի Ավետարանը երկար տասնամյակներ եղել ու շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Սա վկայում է ձեռագրի գեղարվեստական բարձր արժանիքների մասին, որոնց շնորհիվ այն համարվել ու համարվում է հայ մանրանկարչական արվեստի լավագույն նմուշներից մեկը:

Лусине Саркисян. Изучение истории Евангелия художника Авага 1329 г.- Изучение Евангелия 1329 г. началось с середины 20-го века. В разных статьях, научных работах, посвященных армянскому искусству, исследователи обращались к иконографическому и стилистическому анализу нескольких миниатюр. В ряду этих изучений важную роль играют

[1] Տե՛ս Զաքարյան Լ., Ավագ Ծաղկող, «Էջմիածին» հանդես, Եր., 1985, Ը, էջ 52:
[2] Նույն տեղում, էջ 53:

изучения А. Свирина, С. Тер-Нерсесяна, Э. Корхмазяна, А. Геворгяна, А. Аветисяна и Л. Закаряна. Каждый из них по своему открывает необыкновенное искусство художника Авага.

Lusine Sargisian The history of examination of 1329 Gospel by Avag.- The examination of 1939 Gospel was initiated since the mid 20th century. In different articles and works related to the Armenian art the professionals touched upon visual and stylistic analysis of certain miniatures of the 1329 Gospel, as well as published paintings. Within these studies an important role play the works after A. Svirin, G. Hovsepyan, S. Ter-Nersesyan, E. Korkhmazyan, A. Gevorgyan, A. Avetisyan and L. Zaqaryan. Each of them provides new description of the unique art of the painter Avag.